48. ՃԱՂՑՊՆԻ ԽԵՔԱԹ

Կէլնի աղքատ մարթմ. որ հմեն օր կմտածի պան չի կրնա անե: Օրմ կէլնի ուր խամար կէրթա ճաղաց, խետ ճամխին պարկմ կկնդնի: Խորոտ կտնի ճյուր, կկակղցուցի, լավ կփչի էդա պարկ, էրկու իրեքյ խասկ ցորեն կառնի, կթալի էդա պարկի մեչ, կտանի, կասի. - Ճաղցպան, իմ աղուն աղա:

Ճաղցպան միամիտ կէլնի: Կդնի էնտեղ, էդա աղքատ մարթ ետ կդառնա:

Կմնա չում առատուն, կէլնի որ էրթա, ուր աղուն պիրի, կասի. - Տյու իմ աղուն աղցի՞ր ես:

Ճաղցպանն պատասխան կուտա ինոր. - Տյու զիկ խափեցիր, պարկ փչեր ես պիրեր ես, տվեր ես զիկ, - կառնի էտա պարկ, կուտա մեչ աղքատի գլխուն:

Աղքատ ետ կդառնա, կասի. - Կէրթամ մոտ թակավոր կփողոքեմ:

Էտա ճաղցպան կասի. - Մրե՛, մ'էրթա, քյու պարկ ալուր կլցեմ տար:

Աղքատ կտառնա ուր պարկ իլին ալուր կանի, կառնի կէրթն:

Կէրթն մեյ տունմ: Տան տեր կասի՝ իսա աղքատին տեղ արեքյ:

Կիշեր աղքատ կէլնի վեր, կտիսնա, որ էնտեղ քոշմ կա: Կէլնի ուր պարկ կճղի, կթալի վեր քոշու կուտոշներաց: Կուգյն սուտ քուն կտնի վեր ուր: Չում առատուն՝ նոր կէլնի վեր: Կտիսնա, որ քոշ ալուր առի վեր ուր կուտոշներաց: Կուլն, կասի. - Ես էս քոշ կտանեմ իմ ալուրի տեղ:

Կառնի էդ քոշ, կէրթն:

Կէրթն մեյ խատ տունմ խուր կէլնի: Էն տան տիրոչն էլ խորոտ գյիմեշմ կէլնի: Աչք կինի էդա գոմեշ: Կիշեր ուր քոշի փոր կճղի, կթնլի վեր գոմշու կուտոշներաց, սուտ քյուն կտնի վեր ուր կքյնի: Էլ ինք չէլնե վեր, տան տեր շոտ կէլնի վեր չանձ ինքյ:

Տանտեր կասի. - Մ'եր գոմեշ էս ֆուկարի քոշի փոր ճղեր ի: Ի՞նչ պիտի պատասխան տանքյ:

Տանտեր փայխից կէրթն, նոր էդա աղքատ մարթ կէլնի վեր քյնուց, կասի. - Ցա՛, էն գոմեշ կուտաս զի, յա՛ կէրթնմ փողոքեմ:

Տանտեր կասի. - Մա՛րթ, արե քյե իրեքյ խատ, չորս խատ ընոր պես քոշ տամ:

Չի ընթունի, կասի. - Իլա՛ն գոմեշ պիտի առնեմ: Կէլնի, որ էրթն բողոքի:

Տանտեր կասի. - Ախպե՛ր, արի քյու ուզածն ի՞նչ ի, արե տար: Նորեն աղքյատ կուգյն էդա գոմեշն կառնի ու կէրթն:

Կէրթն ուրիշ գյեղ, որ մեկ խատ հարուստ տունմ խարսնիս կանեն. ինքյ ուր խամար կմտածի, կասի՝ «Կանա՞մ էսա խարսն էլ տանի»:

Էնտեղ կասի. - Ջի տեղմ տվեքյ:

Տանտեր կասի. - Ձենքյ կանա քյե տեղ տա:

Մարթն կասի. - Մեկ փայխի պուճախ տվեքյ, զի խերիքյ ի, ի՞նչ պիտ անեմ:

Փայխի մեչ պուճախմ կուտան, ինքյ էնտեղ կքյնի: Էրկու օր կմնա փայխի մեչ:

Օր մը կտիսնա, որ խարս քյներ ի, ինքյ կէլնի վեր ուր ծիյու ամոթ կկտրի, ըսկուն տմանկի խետ, կտանի, կտնի խարսի ջեռբ:

Առավոտ կէլնեն վեր, կտեսնան, որ էտ մարթու ծիյու ոտքերու վերեն արուն կա: Էտ մարթ էլ մէլ կէլնի վեր կտիսնա, որ ծիյու ամոթ կտրեր են. տարեր են:

Նոր էնտեղ կբոռբռա. կասի. - Վո՞վ ի տիսե մարթ էրթա մարթու տուն. մարթու ծիյու ամոթ կտրի:

Նոր էնտեղից դեալալ կուտան կանչել, ամեն մարթու ջեռբ կիրիշկեն: Էտ թազա խարս. որ պիրեր են, էն մենակ կմնա: Ըտոր ջեռբն էլ կիրիշկեն, կտիսնան ամոթն էլ, դմանկն էլ խարսի ջեռբի մեչն ի:

Կասի. - Էսա խարս իրավունքյով ինձի կխասնի:

Էնգյախ, որ ըսընա կասի, տանտեր կասի. - Ախպե՛ր, խո ըսընա պան չես անե, արե իմ փայխի մեչ տաս խատ ծի կես, ո՞րն կուզես՝ էն տամ քյե:

Էն կասի. - Ձէ՛, անկարելի է, էտա խարս ինձի կխասնի՝ թե չէ կէրթամ կփողոքեմ. նորեն էն խարս կտանեմ, ծեր նամուսին էլ կտիպնեմ:

Ծին ու խարս կառնի կէրթան:

Կառնի կէրթա ճամխու կես, խարս կտիսնա մեյ խատ խովիվ կուգյա, խարս կուսի մարթուն. - Կտորմ էջենքյ, նաֆաս առնենքյ:

Էտ մարթ կիճուցի խարսին, խովվուն կկանչի: Կասի. - Խովի՛վ, արե իմ ծիյու գլոխ պոնի, չյում ես էրթամ ճյուրմ խմեմ, գյանմ:

Մարթ որ կէրթա, խարս խովվուն կպատմի. կասի. - Սերն աստծու, էս մարթու մոտեն զի ազատի, ի՞նչ որ կուզես քյե կուտամ:

Խովիվ, տիսնա, որ խարսին զոռով ի կտանի, ինքյ կէլնի վեր, ուր շուն կպիրի խարսի խալավ կխանի կխագյուցի շան. ոտն է գյլոխ շուն կխագյուցի, կէլնի խարսն էլ կփաթթի մեչ ուր գյապանկին կտանի դնի մեչ ոչխրին:

Նորեն կուգյա, կնստի էտա շան մոտ:

Էտա մարթ ճյուր խմելուց կուգյա, խովվին կասի. - Քյու կնիկն, - կասի, - գյլոխս կգեժոի, թող զիկ կապի ուր քյամակ: Էտ տեղ ծիյու տիրոջն կխեծուցի վեր ծիուն, էտ շուն կկապի ինոր քյամակ, կայիմ կկապի, մարթն կքյշի. կէրթա:

Նոր էտա խովիվ կառնի էտա խարս կպիրի կուտա տիրոջ:

Ծիավորն էլ շուն կապի քյամակ, կէրթա, շատ քիչ՝ մեկ ավուր ճամբանի կէրթա. մարթ ուր կնյանն մոտից զատմ չխարցուցե: Էնտեղ ուր էրմունկով կնկան կզարկի, կտիսնա, որ ուր կնիկ շան պես կգյոմոա: Մեյ խատ էլ ըսկում կայիմ կզարկի, շուն կխասնի ծիավորու էրմունկ կայիմմ կպոնի, ծիուց կպիրի տակ, ինոր կխեխթի ու կէլնի ուր ճամբանի կպոնի կուգյա. կխասնի ուր տիրոջ:

Գեռ ըսընկնա խարսն էլ կազատվի, շունն էլ ուր խետ: